

## Է Ա Յ Ո Ր Ո Ր Ք Ա Ն Ո Ս Ա Վ Ն Ե Ր

Շար .

Ամբիս նման նազելու, գիրքէր հէջ չկայ .  
Սիրտըս էրող բոց կրակին վերջ չկայ .  
Փստուղ բերան, լայն երես , ինքն արծաթ,  
Լեզուս անուշ, ծղիքն արծաթ . . . հէջ չկայ :

Գինի՛ խմիր, յաւերժական կեանքն էս է,  
Էս անցաւոր աստուծոյս բանն էսէնց է .  
Վարդի կողքին եարբող գինի է խմում,  
Կէֆդ նայիր, եղած չեղած էս է :

Պայծառ երեսդ ամբիծ հողուդ հայելին,  
Ա՛խ եմ քաշում յիշողութեանդ քայլերին ,  
Որ, երբ զարթնեմ կոխ տան աչերս, բայց աւաղ,  
Փռչնէր շատ կան թարթիչներս ծայրերին :

Կենա՛ցց ասաց . բաժակը ինձ երկարեց ,  
Որ հարբեցի . վշտերի ցանց ինձ լարեց .  
Սրտիս կրակից երկու աչքըս ջրով լի՛  
Փռչի դառայ , ընկայ ոտքը . . . տրորե՛ց :

Մի վարդ ունիմ, եարիս մօտիցն է գալիս,  
Մի վարդ ունիմ, սրտիս բերկրանք է աւլիս .  
Մի վարդ ունիմ, գուրդուրում եմ, փայփայում,  
Նրա հոտից ետրի՛ս հոտն է ինձ գալիս :

Ո՛չ ոք ետրի գրկին արժան չի դառել,  
Թէ իր փողը, սիրտն ու ուշքը չի վառել .  
Ես անփողըս մի ետր ունիմ ծով աչեր,  
Գոհա՛ւր, թէկուզ խօսքիս ականջ չի արել :

Լաւ մարդու հետ վատթար ու չար մի՛ լինիր,  
Լեռնից իջած անբան, հրէջ մի՛ լինիր .

Մարդ իր օրուայ հացովը զո՛հ չի՛ մնալ .  
Թեթեւամիտ , ինքնահաւան մի՛ լինիր :

Աղբի՛ւր սեսար, ափին գինի վայելի՛ր  
Հոգսեր սեսար , երեսն անգամ մի նայիր .  
Էս մեր կեանքը, աղբ՛ւղ կեանքը, տասն օր է ,  
Ժողիտն ու վարդ՛ երեսօթց մի՛ վանիր :

Ո՛րնչեւ երկինք յայտնէ իր կամքն ու վճիռ ,  
Դու վայելի՛ր կեանքի բարեքն ու հրեռի՛ր .  
Երախիքը յաւերժական էն կեանքի՛  
Էն մի բաժակ գինի՛ն էր որ ինձ տուիր :

Վարդը փթթում , ասես գինի է ցայտում,  
Նարդիսն հրեռում, բաժակներ է պտտաւտում  
Երնէկ չնո՛ր, որ իբրեւ մի պղպղջակ՝  
Բարձրապալուխ՝ գինետան գուռն է բաղխում :

Ետրիս գլուխում թշուառ սիրտըս տեղ ուզեց,  
Էդ փորձանքի կապանքից դուրս գալ ուզեց .  
Հոգիս մարդջ մատաղ աղի իր հողուն .  
Երբ գոնապանն անգին քարի գին ուզեց :

Ոսկով է մարդ սիրուններին լաւ շահում,  
Պտուղները անուշ անուշ ճաշակում,  
Նարդիսից էլ հպարտը խօմ էլ չկայ .  
Տե՛ս, նա՛ էլ է ոսկուն գլուխ խոնարհում :

Քո տան ճամբէն դարդերի փուշ շատ ունի .  
Ով գայ մօտդ, ոտքը փշից կարունի .  
Գիտե՛ս, ո՛վ է իմաստունն ու խելացին .  
Ում դէմքին որ կարասն իր ճարպը օւնի :

Էն օրը որ քեզնից պիտի հեռանամ,  
Կարօտիցդ համբերութիւն մոռանամ,  
Թէ աչերս դառնան նային ուրիշին,  
Սիրունութեանդ ազն ու հացը ինձ հարա՛մ :

Գիւղապետի էն էին գինուց բեր ինձ առաւ,  
էս մեր կեանքի կարպետի ծէրը ինձ տուաւ,  
Գինի տուաւ ինձ, ուշաու խելքըս գլխիցս ա՛ռ  
Ես զեղ առեմ ո՛ւստի զալիս, գնում ես ո՛ւր:

Անուշ բերանն իր խոստումը չլինեց.  
Սիրահարի սուր ալքն հողին չփրկեց.  
Որ սիրուհիդ լսեց քո իղձն ու աղերս,  
Վո՛ւ անունը է՛լ մեր միջուկն չլինուեց:

Գինուց ծոմերն հարողներին միշտ կ'ասեն.  
Ոնց որ մեռնին, հէնց էնպէս էլ պիտո՛ւ յառնեն,  
Գինի ու եար, հէնց մեր ուղածն էլ էտ է,  
Որ երբ յառնե՛ք, զրա՛նք էլ մեզ հետ պիտո՛ւ յառնեն:

Իմ սիրուհին նա՛ է որը սէր տւնի,  
Սրա՛ի վրին սիրուց գործած քէն ունի,  
Դու ինձ՝ զիտեա, սրբը ի՛նչ է, սիրողն ի՛նչ,  
Էս բաժակը քեզ պէսներին խոր չոսնի:

Աշխարհիս փառքն իր զրկանքները չարժէ,  
Ողջ վայելքը իր տանջանքները չարժէ.  
Եթէ հազար տարիներին բերկրա՛նքը  
Մի՛ չաթաթուայ վիշտն ու ցաւերը չարժէ:

Ժամանակ է, ելէ՛ք, եարե՛ր, քէֆ արե՛ք,  
Եար ու գինի, դա՛ֆ ու տաւիղ ձեռք առէ՛ք.  
Ոչինչ չի մնալ էս անցաւոր մեր կեանքից,  
Ի զուր տեղը գինին խաբար մի՛ անէ՛ք:

Եեղճ տէրվիշիս անտէր թողար, գնացիր,  
Խո՛ս ջիգերիս վերքին նոր աղ ցանցերի.  
Վախում էի մի օր քեզից զուրկ մնա՛մ,  
Հէնց էք օրը բերիք առաջս հանցերի:

Ես տխուր եմ, աչքդ ընկնի թող վրաս,  
Ես ընձիւղ եմ, արեւդ ընկնի թող վրաս.  
Թէ լինիմ հող, բնկիմ ապքդ, ձէն չտաս,  
Զէ՛ որ հող եմ, ձէնըդ չընկնի թող վրաս:

Թէ ընկեր է, իր խոստումը պիտո՛ւ յեշէ,  
Թէ ճարտորդ է, ճամբին փէշերը թրջէ,  
Մէն մի գրիւր միւս օրուայ յղին է,  
Բայց թէ ումնի՛ց, մեզնից ոչ ոք չդիմէ:

Կամ վիրաւոր սրտիս իղձը կատարուի,  
Կամ սրտիս զուշն հողուս հրեշտակին փարի.  
Իմ խնդիրը Աստուածանից է՛ն է որ  
Երջանկութեան դռները ողջ բաց անի:

Որ խելառ բախտն անողոք է, ինձ օգուտ,  
Որ թշուառ սիրտդ արիւնտու է, ինձ օգուտ.  
Աչքիդ բերը աչքիցդ ելաւ հեռացաւ.  
Որ աչքիդ բերն աչքու՛մդ չէ, ինձ օգուտ:

Գարնան մէջ ենք, զինու բաժակն ա՛ռ գամի՛ր. ✓  
Վշտե՛ր ունիս, գինին խմի՛ր, քայքայուի՛ր.  
Ողջ աշխարհն է քայքայուած ու քայքայուած,  
Էս քայքայուած տեղում գու էլ քայքայուի՛ր:

Հեղեղ պատեց էս մեր կեանքի աւերին,  
Ձի խնայում ոչ վատին ոչ լուսերին.  
Ժամանակը գող է դառել, մտել տունդ.  
Վի՛ր կաց, պա՛րոն, հսկի՛ր տանըդ կահերին:

Ճար չունէի, կախուցայ իր սմբուլից,  
Ասացի ես սէվտայու եմ, խղճա՛ւ ինձ,  
Թո՛ղ զիջիս, ասա՛ք տաք տաք կպի՛ր չրթներին  
Խի՛նք որոնիք, ո՛չ թէ ամբը ձանձրալից:

(Շարունակելի)

Թարգմ. Գարսեղեանից  
Մ. Վ. ՄԱՍՈՒՆՅԱՆԻՑ

Դավիթ